ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ.

Նոյեմբերի 1-ին, ցերեկուայ ժամը 12-ին, գաղտնի քուէարկութեամբ Մայր Տաճարում 77 եկեղեցական և աշխարհական պատգամաւորներից բաղկացած Եկեղեցական—Ազգային ժողովում Հայրապետական թափուր գահի համար ընտրուեցին երկու արժանաւորագոյն թեկնածուներ **ՄԱՏԹԷՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԻԶՄԻՐԼԵԱՆ** 73 *ձայնով ընդդէմ* 4-*ի և* **ԵՂԻԶԷ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԴՈՒՐԵԱՆ** 55 *ձայնով ընդդէմ* 22-*ի։*

Այս ուրախալի լուրը կայծակի արագութեամբ հեռագիրները աւետեցին հեռաւոր վայրերում գտնուած մեր ազգայիններին լցնելով նրանց սրտերը հրճուանքի բուռն զգացումով։

Բայց քանի որ Կաթուղիկոսական ընտրութեան վերաբերեալ մանրամասնութիւնները ընթերցող հասարակութեան համար այնքան էլ պարզ չեն և շատ շատերը չունենալով իրանց ձեռքի տակ պաշտօնական վաւերագրեր, պատահական լրագրական տեղեկութիւններից առնելով նիւթ թիւր հասկացողութիւն են կազմում առ հասարակ ընտրութիւնների մասին, նամանաւանդ, որ ներկայ ընտրութիւնը ունի ընորոշ և հետաքրքիր կողմեր, մենք պարտք ենք համարում «Արարատի» մէջ տալ ճշգրիտ և մանրամասն նկարագիր Ամենայն Հայոց Կաթուղիկոսի ընտրութեան մասին, քաղելով մեր տեղեկութիւնները Սինոդի գործերից, սկսեալ Մկրտիչ Ա. Կաթուղիկոսի մահից յետոյ Սինոդի մէջ կազմած առաջին օրագրից մինչև ընտրեալ թեկնածուների մասին Կովկասի Փոխարքային գրած թուղթը։

Ս. Էջմիածնի Սինոդը 1907 թուի նոյեմբեր 13-ին կայացրած նիստում կազմումէ հետևեալ օրագրերը. «Լուան զզեկուցումն ի պատճառս մահուան ի Տ. հանգուցեալ վեհափառ Կաթուղիկոսի ամենայն Հայոց Տ. Մկրտչի Ա. հարկ է առնել տնօրէնութիւն վասն ընտրութեան Նորոյ Պետի Եկեղեցւոյ Հայոց։ Հրամայեցին ի բաց թողեալ զխնդիր մեկնութեան 1119 յօդ. I. մ. XI. հատ. Օրինաց, որ ասէ՝ «զկնի մահուան վեհափառ Կաթուղիկոսի Ամենայն Հայոց Սինոդն ս. Էջմիածնի առաքէ զծանուցագիրս զայդմանէ յամենայն Հայ թեմս որպէս Ռուսիոյ, նոյնպէս արտասահմանի Հայոց և սահմանէ զտարևոր միջոց վասն ընտրութեան Նորոյ Հայրապետի», հայցել ի Տեառնէ Փոխարքայէն Կովկասու, զի ընտրութիւն Նորոգ Կաթուղիկոսի ամենայն Հայոց սահմանեսցի յամսեանն մայիսի 1908 ամի ըստ առաջիկայ հիմանց. նախ՝ հարկ ի վերայ Սինոդիս գնեն խնդրել զփութացուցումն ընտրու-

թեան կարի ծանրագին վիճակ Նիւթական Մայր Աթոռոյ և հաստատութեանց նորին և այլ կարիք անյեսաձգելիք, զորս հեղինակաւոր իշխանութիւն և եթէ գլխոյ եկեղեցւոյ կարէ լցուցանել։ Ցիշատակեսցի դէթ կարգաւորումն խնդրոյ եկեղեցական–ծխական վարժարանաց և դպրանոցաց, զոր չէ մարթ լուծանել ցհաստատութիւն նորոյ Կաթուղիկոսի։ Երկրորդ՝ եթէ մինչ ցընտրութիւն ի Տէր հանգուցեալ հայրապետի ազգիս Տ. Տ. Մկրտչի երկարատև իմն ժամանակի էին պէտք, զի Սինոդն լցուցանէր զամենայն պահանջս օրինաց, որ վասն առաքելոյ ի համօրէն վիճակս զծանուցագիրս յաղագս ընտրութեան, վասն ժամանելոյ պատգամաւորաց ի ս. Էջմիածին և այլն, զարդիս չէ ինչ դժուարին յապաւել զմիջոց ժամանակի ընտրութեան Կաթուղիկոսի առանց ինասու իրեք վասն գործոյն, քանզի յոյժ դիւրին են ճանապարհք հաղորդակցութեան։ Բաց յայսցանէ, առաջի Սինոդիս են այն ևս հանգամանք, զի եթէ անփոփոխ պահպանեսցի «տարեոր միջոց» ընտրութեան նորոգ Հայրապետի, ընտրութիւնդ այդ պարտի լինիլ ի գարնանի 1909 ամի ի հարկէն, վասն զի տարելից մահուան ի Տէր հանգուցեալ հայրապետի ազգիս լրանայ ի վերջ ամսեան հոկտեմբերի առաջիկայ ամի և ընտրութիւն ի ձմրան բաղմադիմի հանդիպեսցի դժուարութեանց։ Իսկ թողուլ զընտրութիւնն ցգարուն 1909 ամի՝ է բաղում ամսովք յարատևել զժամանակ թափուր դոլոյ Հայրապետական Գահին։ Ի պատճառս իսկ այսոցիկ խնդրել ի Տ. Փոխարքայէն Կովկասու, զի փութացուսցէ ցորչափ մարթ իցէ զկատարումն միջնորդութեանս և զհետևանացն ծանուսցէ Սինոդիս։»

Օրագրագրի այս բովանդակութիւնը Սինոդը նոյն ամսի 15-ին թ. 2507 գրութեամբ հասցնումէ Կովկասի Փոխարքային։

Նոյեմբերի 22-ին մտնումէ Սինոդ Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարքի թուղթը, որով ի միջի այլոց խնդրումէ շտապեցնել ընտրութիւնները և միջնորդել կառավարութեան

առաջ, որպէսզի Հայրապետի ընտրութիւնը տեղի ունենայ 1908 թուի մայիս ամսին։

Նոյն ամսի 30-ին ստացուեմ է Կովկասի Փոխարքայի գրութիւնը ընտրութիւնները փութացնելու առթիւ, որ հետևեալն է, «Զերդ բարձր Սրբազնութիւն (թուղթն ուղղած է Տեղակալ Դէորգ Արքեպիսկոպոսին) Էջմիածնի Հայլուսաւորչական Սինոդի նոյեմբեր 15-ին № 2507 առաջադրութեան մասին պարտք եմ համարում յայտնել Զերդ Բարձր սրբազնութեան, որ ես դժուարանում եմ ընթացք տալ Սինոդի միջնորդութեանը Ամենայն Հայոց Ծայրագոյն Պատրիարք Կաթուղիկոսի ընտրութիւնը 1908 թուի մայիսին նշանակելու մասին ի նկատի ունենալով օրէնքի կտրական ցուցումը (1119 յօդ. օտար դաւան. կանոնագրքի) այն մասին որ, նոր Պատրիարք Կաթուղիկոս ընտրելու համար նշանակուում է տարեւոր ժամանակ։ Հայցելով Զեր սուրբ աղօթքները, խորին յարգանք և կատարեալ անձնուիրութեամբ պատիւ ունիմ մնալ Զերդ Բարձր Սրբազնութեան խոնարհ ծառայ Կոմս Վորոնցով-Դաշկով»։

Այս գրութիւնն ստանալուց յետոյ Սինոդը դեկտեմբերի 5-ին № 2690 գրութեամբ տեղեկացնում է Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարքին և նոյն ամսի 7-ին օրագրութեամբ որոշում է Ամենայն Հայոց Կաթուղիկոսի ընտրութիւնն կատարել 1908 թուի հոկտեմբերի 30-ին և ուղարկել բոլոր Հայոց թեմական առաջնորդներին ծանուցողական թղթեր ինչպէս Ռուսաստանում գտնուածներին, նոյնպէս և Տաճկաստանում, Պարսկաստանում և Եգիպտոսում։ Ցուցակները կազմելու ժամանակ Սինոդը ուշադրութեան է առնում այն հանգամանքը, որ վերջին 15 տարուայ ընթացքում արևմտեան Եւրոպայում և Ամերիկայում հայերի թիւը բազմացած լինելով և ի Տէր հանգուցեալ Մկրտիչ Կաթուղիկոսի կողմից ժամանակաւոր հովիւների փոխարէն թէ Ամերիկայում և թէ Արևմտեան Եւրոպայում արդէն հաստատուած են առաջնորդութիւններ, դեկտ 7-ին № 2714 գրութեամբ դիմում է Կովկասի Փոխարքային և հարցնում թէ արդեօք նորա կողմից արգելքի չի հանդի-

պի, եթէ ծանուցողական թղթերը ուղարկուին և այդ թեմերի առաջնորդներին։

Կովկասի Փոխարքան այս առթիւ դիմումն է անում Ներքին գործոց Նախարարութեան որն 1908 թուի յունուարի 20-ին № 7595 գրութեամբ հարցեր է տալիս Սինոդին թէ՝

1. Ե՞րբ են կազմակերպուել յիշեալ երկու թեմերը։

2. Ո՞րտեղերն են մտնում նրանց շրջանի մէջ.

3. Ո՞րտեղ է որոշուած թեմական առաջնորդի մշտական բնակավայրը,

4. Ի՞նչ ձևով են այդ պաշտօնեաները հաստատուում,

5. Ո՞վքերեն այժմ վարում այդ պաշտօնները։

6. Ո՞րքան հայ լուսաւորչականներ կան այդ թեմերում.

Այս հարցումներին փետրուարի 15-ին Սինոդը պատասխանում է հետեւեալը. «....Արևմտեան Եւրոպայի թեմը կազմակերպուել է 1898 թուին և ունի մօտաւորապէս 10,000 ծխական հայ լուսաւորչականներ. պարունակում է իր շրջանում Արևմտեան Եւրոպայի բոլոր տեղերը, բաց առեալ Եւրոպական Տաճկաստանը և Բալկանեան թերակղզին, որոնք ենթարկուում են Կ. Պոլսոյ Հայոց պատրիարքին։ Թեմում կան եկեղեցիներ. մի հատ Մանչեստերում, ուր և սահմանուած է թեմական առաջնորդի համար մշտական բնակավայրը, մի հատ Պարիզում, նորակառոյց յանուն Յովհաննու Մկրտչի և երկու վանք Սուչաւայում (Աւստրիա). մի աղօթատուն Մարսիլիայում. յշիեալ եկեղեցիները և աղօթատունը ունին իրանց սեպհական քահանաները, իսկ թեմի միւս հայ լուսաւորչական գաղութի հոգևոր կարիքներին բաւարարութիւն է տալիս Թեմական Առաջնորդը պարբերաբար այցելութիւններ տալով նորանց։ Առաջնորդ նշանակուում է Պատրիարք Կաթուղիկոսի անձնապէս ընտրութեամբ և հաստատումով և ներկայիս այդ պաշտօնումն է Սրբազան Դէորգ Եպիսկոպոս Իւթուճեան։

Իսկ Ամերիկայի թեմը նոյնպէս կազմուել է 1898 թուին և ունի մօտ 40,000 ծխական։ Թեմը պարունակում է

իր մէջ ամբողջ Ամերիկան՝ առանձին քահանաներով. եկեղեցիներ կան հեռաւեալ քաղաքներում՝ Ս. Փրկչի անունով Ուստրում, որը և ծառայում է Թեմական Առաջնորդի համար որպէս մշտական բնակավայր, Նիւ-Եօրքում, Փրէժում ս. Երրորդութեան անունով և Ուէստ Օբօկնում՝ յանուն ս. Խաչի։ Իսկ Բոստոն, Պրովիդէնս, Չիկագօ և Լոբէնս քաղաքներում կան աղօթատներ, նոյնպէս իրանց քահանաներով։ Իսկ թեմի մնացած հայ գաղութի հոգևոր պէտքերը բաւարարւում են այնպէս ինչպէս, վերը ասուեց Արևմտեան Եւրոպայի մասին։ Այս թեմում (Ամերիկայում) Առաջնորդն ընտրւում է ծխից և հաստատւում է Ամենայն հայոց Պատրիարք Կաթուղիկոսի կողմից։ Ներկայումս թեմը կառավարում է Յովսէփ արքեպիսկոպոս Սառաջեանը, մինչև իր պաշտօնատեղին կհասնի Եղնիկ արքեպիսկոպոս Ապահունին որ ի Տէր Հանգուցեալ Պատրիարք Կաթուղիկոսի կողմից հաստատուածէ Առաջնորդական պաշտօնում»։

Ամբողջ հինգ ամիս Սինոդը պատասխան չստանալով նախարարութիւնից, տարւոյս մայիսի 23-ին թ. 1338 գրութեամբ կրկնում է իր միջնորդութիւնը, խնդրելով արագացնել խնդրի լուծումը ի նկատի ունենալով Կաթուղիկոսական ընտրութեան ժամամակի մօտենալը։

Դարձեալ անպատասխան մնալով՝ սեպտեմբերի 22-ին թ. 2397 հեռագրով խնդրում է շտապել, որին նոյն ամսի 24-ից հետևում է Օտար Դաւանութեանց Դեպարտամենտի Փոխ-Դիրեկտոր Սմիրնովի հետևեալ հեռագիրը։ «Արևմտեան Եւրոպայի և Ամերիկայի թեմերի ճանաչելու խնդիրը վճռուած չլինելով, որի մասին գրագրութիւնը շարունակւում է, ծանուցողական թղթերը նրանց չեն ուղարկուիլ»։

Այսպիսով ներկայ ընտրութիւններին երկու թեմերը զրկւում են կաթուղիկոս ընտրելու մէջ մասնակցութիւն ունենալուց։

Մենք տեսանք, որ Սինոդը ներկայ ընտրութեան համար երկու կարևոր կէտ է շոշափել, յաջողեցնել ընտրու-

թիւնը մայիսին և երկու նոր կազմակերպուած թեմերի համար ձայնի իրաւունք ստանալ, բայց թէ մէկը և թէ միւսը անկարող է եղել յաջողեցնել իրանից անկախ պատճառներով։

Սինոդը, ինչպէս վերն ասացինք, դեկտեմբերի 7-ին կայացրած օրագրով կարգադրում է ծանուցողական թղթերը բոլոր թեմակալներին ուղարկել։ Օրինաց համաձայն Սինոդը արտասահմանեան թեմերին թղթերը պիտի ուղարկէր Օտար դաւանութեանց դեպարտամենտի միջոցաւ, ուստի և 1907 թուի դեկտեմբերի 10-ին կազմելով բոլոր արտասահմանեան թեմերի ցուցակը իր № 2728 գրութեամբ ուղարկում է Կովկասի Փոխարքային, խնդրելով օրէնքով որոշուած ճանապարհով ուղարկել ըստ պատկանեաց։

Ծանուցողական հրովարտակը ունի հետևեալ բովանդակութիւնը.։

«....

ԽՆԴԱԼ Ի ՏԷՐ,

«Սրբազնագոյն Հայրապետն մեր և Կաթողիկոսն ամենայն Հայոց Տ. Տ. ՄԿՐՏԻՉ Ա. յետ հնգետասանամեայ Հայրապետութեան անքննելի կամօքն Աստուծոյ փոխեցաւ յաստեացս ի 29 Հոկտեմբեր ամսոյ այսր 1907 ամի՝ թողլով թափուր զԱթոռ Կաթողիկոսութեան աղգիս և զՄիաբանական Ուխտ Սրբոյ Աթոռոյս ի վիշտս տրտմութեան։

«Ծանուցեալ զայս գոյժ ոգառիթ Ձերումդ

և Ձեօք համօրէն հոգևորական դասու և բարեպաշտօն հայազգեաց Տիրախնամ՝ քաղաքաց և գիւղօրէից վիճակիդ՝ Սինոդս Սրբոյ Էջմիածնի հրաւիրէ զՁերդ

և զՄիաբանական Ուխտ Սրբոյ Եկեղեցւոյ Ձերոյ՝ ուղղել զՁերմագին մաղթանս առ Քահանայապետն յաւիտենից Քրիստոս հանգուցանել ի լոյս երեսաց իւրոց զհոգի բարեյիշատակ Հայրապետին մերոյ և զմեզ—զորբացեալ զաւակունս Մօրն լուսոյ Սրբոյ Կաթուղիկէ Էջմիածնի՝ մխիթարեալ պահպանել օժանդակութեամբ և շնորհօք Ամենազօր Սուրբ Հոգւոյն։

«Հնազանդեալ կամաց Ամենախնամ Արարչին՝ յետ ամփոփելոյ Միաբանութեան Աթոռոյս ի հոգ տապանի զնշխարս հոգելոյս Հայրապետին՝ և զկնի հոգալոյ զարժանն զեղանակէ անսայթաք առաջնութեան ներքին և արտաքին մասանց կառավարութեան Սրբոյ Վանից՝ և առաջի ունելով աչաց, զի ընտրութիւն նորոյ Պատրիարք Կաթողիկոսի ըստ զօրութեան ԲԱՐՁՐԱԳՈՑՆ հաստատեալ կանոնադրութեան պարտի լինել ի լրանալ միոյ ամի յօրէ մահուան Հայրապետին, Մինչդեռ Սրբոյ Էջմիածնի տնօրինեաց հասուցանել ի գիտութիւն Ձերդ

և Քրիստոսասէր ժողովրդոց յանձն եղելոց Ձերում Հովուական խնամատարութեան, և յանձն առնել Ձեզ ի ձեռն քաղաքական իշխանութեան տեղւոյդ հրաւիրել զՀայազգի ժողովրդականս ըստ սահմանեալ կանոնաց՝ առանձին ինն ազգասիրական եռանդեամբ, հոգւով մխիթարութեան, բարեպաշտութեան և սիրոյ՝ ընտրել ի միջոյ իւրեանց զպատգամաւոր մի իբրև ներկայացուցիչ իւրեանց, և զկնի ընտրութեանն հրաւիրել զնա՝ զընտրեալ պատգամաւորն, գալ այսր ի Սուրբ Էջմիածին ընդ Ձերումդ որ էք ներկայացուցիչ համայն հոգևորական դասու վիճակիդ, և ներկայ գտանիլ աստ ի Մայր Աթոռս յ30-րդ օր Հոկտեմբերի ամսոյ առաջիկայ 1908 ամի՝ առ ի ընտրել ի համայն հոգևորականաց Ազգիս ճիշդ պահպանութեամբ ծիսից և սովորութեանց սահմանելոց առ այս ըստ օրինի՝ զարժանաւոր յաջորդ Սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչի, ի կառավարել զեկեղեցին Քրիստոսի և զՀայրապետական թափուր մնացեալ Աթոռ Կաթողիկոսութեանն ամենայն Հայոց, որպէս զի ընտրեալ գլուխն Սրբոյ Եկեղեցւոյ մերոյ վարեսցէ զՀայրապետական իշխանութիւնն յամենայնի ըստ անտեսիւր Աւետարանական վարդապետութեան և կանոնաց Սրբոց Հարց ի պարծանս լրութեան Ազգիս և ի պայծառութիւն Եկեղեցւոյ մերոյ Սրբոյ։ Եւ եթէ հանդիպիցիք արդեալանաց անձամբ ներկայ գտանել ի Սուրբ Էջմիածին ի ժամադրեալն աւուր, յայնժամ բարեհաճեսջիք առա-

քել ի ժամանակին զներկայացուցիչ Ձեր զընտրեալն ի Ձէնջ։ Իսկ եթէ ըստ անակնուն եղի իմիք հանգամանաց և դիպուածոց ոչ յաջողեսցի ոչ հոգևոր ներկայացուցչի

Ձերոյ և ոչ աշխարհական պատգամաւորին ընտրելոյ ի բարեպաշտ հայազգեաց վիճակիդ անձամբ գտանել ասա ի Սուրբ Էջմիածին ի ժամ՝ ընտրութեան ի նշանակեալն աւուր, յայնժամ՝ ունիք Դուք և աշխարհական պատգամաւորն իրաւունս յայտնելոյ զկարծիս Ձեր և զորոշումն առ այն՝ թէ զո՞ ոք յեկեղեցականաց գտանէք արժանաւոր այնմիկ վեհատիճան Հայրապետական իշխանութեան, առաջարկել կանխաւ Սինոդիս գրաւոր, զի մի արգելցի ընտրութիւնն ի նշանակեալն աւուր։

«Ի վերջ բանիս՝ Սինոդս Սրբոյ Էջմիածնի հանդերձ Ուխտիւ Միաբանութեան Սրբոյ Աթոռոյս՝ միջնորդութեամբ ամենայն Սրբութեանց հանգուցելոց ի տաճարիս, ամենաջերմեռանդն աղօթիւք առ Աստուած հայցէ վասն սգազգեաց հոգևորականաց և բարեպաշտոն ժողովրդանաց հայազնէից մեծաց և փոքունց բնակելոց ի վիճակիդ զերկար կեանս, զյաջողութիւն ամենայն բարենպատակ գործոց և զբարգաւաճութիւն ամենայն առաքինական ձեռնարկութեանց, պահպանելով զամենեսեան զնոսա ընդ հովանեաւ ամենազօր Աջոյն իւրոյ անքնաս յամենայն երեւելի և աներևոյթ թշնամեաց ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ։ Ամէն։

«ՏԵՂԱԿԱԼ ԱՏԵՆԱՊԵՏԻ ՍԻՆՕԴԻ

ԱՆԴԱՄՔ ՍԻՆՕԴԻ»

Այս հրովարտակներն ուղարկուած են հետևեալ հասցէներով.

1 Կաթուղիկոսի Տանն Կիլիկիոյ
2 Պատրիարքին Հայոց Կ. Պոլսոյ
3 » Ս. Երուսաղէմի

4 Տեղապահին Կաթուղիկոսի Տանն Աղթամարայ
5 Առաջնորդին Երևանայ
6 » Վրաստանի և Իմերէթի
7 » Ղարաբաղի
8 » Շամախու
9 » Ն. Նախիջևանի և Բեսարաբիայի
10 » Աստրախանի
11 » Թեքիրդաղի
12 » Ադրիանապօլսոյ
13 » Վառնայի
14 » Մոլդովալախիայի
15 » Տրապիզօնի
16 » Ճանիկի
17 » Շապին Գարահիսարի
18 » Տամզարայի և Սեբաստիայի
19 » Ամասիայի և Մարզվանի
20 » Եւդոկիայի (Թոքատ)
21 » Մեքրատիայի (Սվազ)
22 » Կարնոյ (Էրզրում)
23 » Վանայ
24 » Լիմ և Կտուց անապատաց
25 » Բասենի (Հասանղալա)
26 » Բայազիտու
27 » Մշոյ
28 » Բզնի (Առինջ)
29 » Բաղէշի (Բիթլիզ)
30 » Դերջանի
31 » Բաբերդի (Բայբուրդ)
32 » Երզնկայի
33 » Զնդուշայ
34 » Բալուի
35 » Զարսանջակի
36 » Խարբերդի
37 » Արաբկիրի
38 » Ակնայ

39 Առաջնորդին Բեամախու
40 » Արծնու
41 » Կեսարիայի
42 » Տիգրանակերտի (Դիարբեքիրի)
43 » Բրդստանի (Սղերդ)
44 » Եդեսիայի (Ուրֆա)
45 » Բաղդատու
46 » Ղալաթիոյ (Էնկիւրիա)
47 » Զմիւռնիոյ (Իզմիր)
28 » Եգիպտոսի և Կրէտէի
49 » Պանտրմայի
50 » Կուտինայի
51 » Նիկոմիդիոյ (Իզմիտ)
52 » Խուլիվանուց (Զմշկաձագ)
53 » Պրուսայի
54 » Պարսկա–Հնդկաստանի
55 » Ատրպատականի

Մինչդեռ այս պարտականութիւնները կատարելուց յետոյ արդէն անցել էր այլ ներքին գործողութիւններին և պաշտօնական պարտաւորութիւններին յուսալով, որ նշանակած ժամանակ ըստ կանոնադրութեան ընտրեալ հոգևոր և աշխարհական պատգամաւորները կգան իրանց մեծ բարոյական պարտաւորութիւնները կատարելու։

Բայց հետզհետէ Կ. Պոլսի պատրիարքարանից, Ատրպատականի և Պարսկահնդկաստանի առաջնորդներից հասնում են տեղեկութիւններ, որ ծանուցողական հրովարտակները չեն յանձնուած։ Այս տեղեկութիւնները սկզբում աւելի սառն, զուտ պաշտօնական բնաւորութիւն են կրում, բայց քանի մօտենում է ընտրութեան ժամանակամիջոցը այնքան աւելի տենդային, անհամբեր են դառնում և չբաւականանալով պաշտօնական թղթերով, տեղում են հեռագիրներ։ Մինչդեռ սկզբում միայն հոգևոր ներկայացուցիչներն են վարում գրագրութիւն առնապատիւ Տ. Տեղակալի հետ խնդրելով շտապեցնել հրովարտակների առաքումը, ներկայ տարուայ երկրորդ կե-

սին հրովարտակների տեղ չհասնելը սկսում է յուզել ամեն տեղ թէ Ռուսաստանում և թէ արտասահմանում հայ հասարակութիւններին, և Էջմիածնի միաբանութեան ու սկսում են ամեն կողմից դիմումները Սինոդին և Տեղակալին որպէսզի Կաթուղիկոսի ընտրութիւնը կատարուի նշանակած ժամանակին։ Սինոդը ոչ պակաս յուզիչ օրեր է անցկացնում բազմիցս դիմումներ անելով թէ Կովկասի Փոխարքային թէ օտար դատութեանց դեպարտամենտին և թէ Ներքին գործոց Նախարարին։

Աւելացրէք սրա վրայ և այն, որ սկսում է ժողովրդի մէջ յուզիչ լուրեր տարածուել առհասարակ Կաթուղիկոսական ընտրութեան մասին.... Մեր պարբերական մամուլը և ժողովրդի հետաքրքրող մասը անտեղեակ լինելով Սինոդի պաշտօնական գրագրութիւններին, սկսում են անտեղի կերպով մեղադրել Սինոդին և Տեղակալին դանդաղկոտութեան մէջ. իսկ պղտոր ջրում ձուկ որսացողները հրովարտակների տեղ չհասնելը վերագրում են ինչ որ միտումների։

Սինոդը օգտուելով Փոխարքայի Պետերբուրգ լինելուց, հեռագրով սեպտեմբերի 3-ին դիմում է նրան խընդրելով իրանից կախուած միջոցներով չտապեցնել հրովարտակների ուղարկելը։ Հաղիւ սեպտեմբերի 11-ին Պետերբուրգից Կովկասի Փոխարքայի գիւանի Գիրեկտոր Պետերսոնը, իսկ 12-ին իր կալուածքից ինքը Փոխարքան հեռագրում են Տեղակալին թէ՝ սեպտեմբերի 11-ին ծանուցողական հրովարտակները յանձնուած են Արտաքին գործոց Նախարարին դեսպանների միջոցաւ թեմերն ուղարկելու։ Այս վերջին տեղեկութիւնը հաղիւ հանգստացնում է յուզուած մարդերը թէ Էջմիածնում և Ռուսաստանի թեմերում և թէ արտասահմանում։

Մինչդեռ մի կողմից ծանուցողական հրովարտակների արտասահմանեան թեմերը չհասնելու դէպքը ընդհանուր մտատանջութեան առարկայ էր և զբաղեցնում էր հասարակական միտքը, միւս կողմից ոչ մի արդելք չլինելով Ռուսաստանի թեմերում պատգամաւորական ընտրութիւն-

ներ կատարելու համար, առաջնորդները ստանալով Մինոգից ծանուցողական հրովարտակները ձեռնարկեցին ընտրութիւնների նախապատրաստութեան։

Սակայն այստեղ Ռուսաստանում ևս ոչ պակաս խոչընդոտութեան առիթ եղան այն մի քանի թերութիւնները, որոնք պոլոժենիէի հրատարակման օրից գործադրւում են մեզանում և որոնք հնացած լինելով՝ չեն համապատասխանում արդի պահանջներին. նախ՝ որ Ռուսաստանի ամբողջ հայութիւնը, որի թիւը հաշւում է ոչ պակաս քան 1 միլ. 300 հազար, բաժանուած է 6 թեմերի, ուրեմն ըստ օրինի պիտի տայ 6 աշխարհական և 6 հոգևորական պատգամաւոր։ Բացի այդ Ռուսաստանի հայ թեմերը իրարից մեծ տարբերութիւն ունին. այսպէս օրինակ երբ Բեսարաբիայի, Աստրախանի, Շամախու թեմերը ունին 70–80 հազար հայ–ազգաբնակութիւն, Ղարաբաղն ունի 200 հազար, Տփխիսն՝ 350 հազար, իսկ Երևանի թեմը՝ 6–700 հազար և սոցանից իւրաքանչիւրը տալիս է մի աշխարհական պատգամաւոր։ Մինչդեռ յայտնի է, որ Տաճկաստանում թեմեր կան, որոնց հայ ազգաբնակութեան թիւը 2000-ից աւելի չէ և Երևանի թեմի հաւասար մի աշխարհական ներկայացուցիչ է ուղարկում Կաթուղիկոսական ընտրութեան համար։ Երկրորդ՝ անկախ այս աչք ծակող անարդարութիւնից, կայ և մի երկրորդ անարդարութիւն, որ թեմերում ազգաբնակութիւնը հաւասար չափով չի օգտւում ձայնի իրաւունքից. այսպէս 1865 թւին հրատարակուած կանոնների համաձայն առաջնորդանիստ քաղաքի իւրաքանչիւր եկեղեցու ծուխը տալիս 3–ական պատուիրակ, իսկ գործակալութիւններն ու փախանորդութիւնները՝ 2 ական պատուիրակ. թէ որ ասուիճանի անհաւասար բաժանումն է այս և ընտրական իրաւանց սահմանափակումն, ցոյց տալու համար բերենք մի քանի օրինակ։ Թիֆլիս քաղաքն ունի 22 եկեղեցի և կանոնների համաձայն տալիս է 66 պատուիրակ, այդ եկեղեցիների մէջ կան այնպիսիները, որոնք հազիւ 1500 ծխական ունին և տալիս են 3 ական պատուիրակ, մինչդեռ Ախալցխայի փո-

խանորդութիւնը, որ բաղկացած է 80 հազար հայ ազգաբնակութիւնից տուել է միայն 2 պատուիրակ։ Նոյնը կարելի է ասել Երևանի թեմի համար.—Երևան քաղաքը ունի 6 եկեղեցի և տուել է 18 պատուիրակ, մինչդեռ Ալէքսանդրապոլի փոխանորդութիւնը իր 170 հազար հայ ազգաբնակութեամբ միայն երկու պատուիրակ։

Եթէ հնարաւորութիւն չկար թեմերի թիւը շատացնելու մասին մտածել, գոնէ չպիտի առաջնորդների ուշադրութիւնից վրիպէր երկրորդ կէտը, այն է ձայների ըստ ազգաբնակութեան թուի բաժանելը։ և մենք յիրաւի, տեսնում ենք Սինոդի գործերից, որ Բեսարաբիայի թեմի առաջնորդ Ներսէս Արքեպիսկոպոսը յունուարի 14-ին, թ. 12, Թիֆլիսի թեմի առաջնորդ Գարեգին Արքեպիսկոպոսը, յունուար 28-ին թ. 48, և Երևանի թեմական Փոխանորդ Յուսիկ Արքեպիսկոպոսը մարտի 17-ին թ. 152 յայտարարութիւններով դիմում են Սինոդին ընտրութեան վերաբերեալ մի քանի հարցեր տալով՝ 1. պէտք է 21 տարին լրացած ծխականները մասնակցեն ընտրութեան, ըստ վերջին ծխական կարգադրութեան. 2. պէտք է կանայք մասնակցեն ընտրութեան նոյն կանոնադրութեան համաձայն. 3. պէտք է հոգևոր կառավարութիւններին ստորադրեալ իւրաքանչիւր գործակալութիւնից հրաւիրել 2 ական պատուիրակ, փոխանակ ամբողջ վիճակից միայն 2 պատուիրակ հրաւիրելու։

Սակայն Սինոդը չկամենալով իւրովի, առանց ամենայն Հայոց Կաթուղիկոսի հաւանութեան, որևէ փոփոխութիւն անել պօլօժէնիէի կամ Կովկասի նախկին Փոխարքայի տուած ընտրական կանոնների մէջ, մայիսի 16-ին թ. 1217 շրջաբերականով ուղարկում է տպագրած յիշեալ կանոնները բոլոր թեմականներին, պատուիրելով ճշտութեամբ գործադրել ներկայ Հայրապետական ընտրութեան ժամանակ։

Իսկ այս կանոններով զրկւում են ձայն տալու իրաւունքից կանայք և 25 տարեկանից փոքր արական ծխականները և իր ուժի մէջ է մնում այն, որ առաջնորդանիստ քաղաքի իւրաքանչիւր եկեղեցի տալիս է 3 պատ-

ւիրակ, Կոնսիստորիաներին ենթակայ գործակալութիւնները (որքան էլ փոքր լինին) և փոխանորդութիւնները (որքան էլ մեծ լինին) 2 ական պատուիրակ։

Այս մի քանի տարակուսելի կէտերը պարզելուց յետոյ Ռուսաստանի բոլոր Հայոց թեմերում մինչև սեպտեմբերի 28-ը կատարուեցին պատգամաւորների ընտրութիւնները ամենայն կանոնաւորութեամբ։ Ընտրութիւնների կանոնաւորութեան մէջ փոքր ինչ դիսոնանս մտցրեց Երևանի թեմի ընտրութիւնը, որ, ինչպէս յայտնի է պարբերական թերթերից, պատուիրակների մի մասի կողմից առաջարկուեց Մինոդին բեկանել, բայց սա չհամաձայնելով նրանց բերած պատճառաբանութիւնների հետ, մերժեց նրանց առաջարկը և հաստատեց ընտրութեան կանոնաւոր լինելը։

Հոկտեմբեր ամսի սկզբներից սկսած Մինոդ են մտնում Տաճկաստանի, Պարսկաստանի և Ատրպատականի աշխարհական պատգամաւորների ընտրութեան վաւերաթղթերը, որ տևում է մինչև հոկտեմբերի 31-ը, այսինքն կաթուղիկոսական ընտրելիների քառանուն ցանկի կազմելու օրը։

Ինչպէս երևում է նախկին կաթուղիկոսների ընտրութեան գործերից Տաճկահայոց բոլոր թեմերի աշխարհական և հոգևորական պատգամաւորների անուանացուցակը Կ. Պոլսի Հայոց Պատրիարքը վաղօրօք պատրաստելով ուղարկած է եղել Մինոդին, մինչդեռ այս անգամ ծանուցողական հրովարտակների ուշ հասնելու պատճառով (Կ. Պոլսի Տեղապահ Եղիշէ եպ. Դուրեանի հեռագրից երևում է որ յիշեալ հրովարտակներն ստացուել են Կ. Պոլսում սեպտեմբերի 27-ին), Պատրիարքարանը անկարող է եղել ուղարկել պատգամաւորների լիակատար ցուցակը և Նորին Գերապատուութիւն Տ. Տեղապահն Կ. Պոլսոյ Պատրիարքի իր յանուն, Տեղակալ Սրբազանի, գրած հոկտեմբերի 17-ին թուակիր № 855 թղթով յայտնում է, որ Պատրիարքարանին հասած տեղեկութիւններից երևում է, որ միայն 35 թեմերում ընտրութիւններ են կատարուել։ Տաճկահայոց շատ թեմերից ուղղակի Մինոդին հեռագրով հաղորդել են ընտրութիւնների հետևանքը և պատգամա-

ւոր նշանակել կամ Ռուսահայերից կամ այլ տեղերից։

Հոկտեմբերի 30-ին վերջնականապէս Սինոդը վերատուգելուց յետոյ բոլոր աշխարհական և հոգևորական պատգամաւորների վաւերագրերը տպագրել է տալիս կարգով այն պատգամաւորների անուանացուցակը, որոնք իրաւունք են ունեցել ընտրութեանը մասնակցելու։ Առաջ ենք բերում այդ ցանկը այն կարգով, ինչ կարգով որ կազմած է Սինոդի կոդմից։

ՑՈՒՑԱԿ

ԱՆԴԱՄՈՑ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ—ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅՆ,

ՈՐ ՎԱՍՆ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ԾԱՅՐԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ԱՍԵՑԱՑ ՀԱՅՑԱՑ

Յ 30 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1908 ԱՄԻ,

Ի Ս. ԷՋՄԻԱԾԻՆ։

Սինոդ ս. Էջմիածնի.

1. Տ. Գէորգ Արքեպս. Սուրէնեան, կաթ. Տեղակալ.
2. Տ. Յովհաննէս Արքեպիսկոպոս Շիրակունի.
3. Տ. Յուսիկ Արքեպիսկոպոս Մովսիսեան.
4. Տ. Սահակ Վարդապետ Ամատունի.
5. Տ. Մեսրոպ Վարդապետ Տ. Մովսիսեան.
6. Տ. Յուսիկ Վարդապետ Զոհրաբեան.
7. Տ. Մատթէոս Վարդապետ Մատթէոսեան.
8. Տ. Բարգէն Վարդապետ Աղաւելեան.

Պատգամաւորք Միաբանութեան ս. Էջմիածնի.

9. Տ. Մեսրովբ Արքեպիսկոպոս Սմբատեան.
10. Տ. Սուքիաս Արքեպիսկոպոս Պարգեան.

11. Տ. Գրիգոր Արքեպիսկոպոս Գառնակերեան.
12. Տ. Բարդուղիմէոս Եպիսկոպոս Գէորգեան.
13. Տ. Ղևոնդ Եպիսկոպոս Յովակիմեան.
14. Տ. Գրիգորիս Վարդապետ Տէր Յակովբեան.
15. Տ. Հմայեակ Վարդապետ Արշարունի.

Պատգամաւորք Կաթուղիկոսութեանց.

16. Ներկայացուցիչ Կաթուղիկոսի Տանն Կիլիկիոյ.
17. Ներկայացուցիչ Կաթուղիկոսի Տանն Աղթամարայ. լիազ. Տ. Մեսրոպ վրդ. Տէր Մովսիսեան

Պատգամաւորք Պատրիարքութեանց.

18. Ներկայացուցիչ Պատրիարքի Հայոց Ս. Երուսաղէմի. լիազ. Տ. Աշոտ Եպիսկոպոս Շախեան
19. Ներկայացուցիչ Պատրիարքի Հայոց Կ. Պոլսոյ. լիազ. Տ. Յակոբ Եպս. Աշոտ Փափազեան

Հոգեւոր Պատգամաւորք թեմից Հայոց.

20. Առջնորդ թ. Երևանայ. Տ. Հմայեակ վարդապետ
21. « « Վրաստանի. Տ. Գարեգին Արքեպիսկոպոս
22. « « Ղարաբաղի. Տ. Աշոտ Եպիսկոպոս
23. « « Շամախւոյ. Տ. Անանիա Արքեպիսկոպոս
24. « « Նոր Նախիջ. և Բես. լիազ. Տ. Մուշէ վարդապետ
25. « « Աստրախանի. Տ. Մխիթար վարդապետ
26. « « Թեքիրտաղի. լիազ. Տ. Մեսրոպ ա. քահ. Մելեան
27. « « Անդրիանուպոլսոյ. Տ. Դանիէլ ծ. վրդ. Յակովբեան
28. « « Վառնայի.
29. « « Մոլդովալախիոյ.
30. « « Տրապիզոնի. Տ. Էմմանուէլ վրդ. Պալեան
31. « « Ճանիկի. Տ. Սահակ ծ. վրդ. Օտապաշեան
32. « « Շապին–Գարահիսարի. լիազ. Տ. Ներսէս

Ծ. վրդ. Խարախանեան

33. « « Տամզարայի և Ացպտերի.

34. « « Ամասիոյ և Մարզուանի. Տ. Մամբրէ քահ. Ֆախիրեան

35. « « Եւդոկիոյ (Թոխատ.). լիազ. Տ. Գրիգորիս վրդ. Պալագեան

36. « « Սեբաստիոյ (Սվազ). Տ. Թորգոմ ծ. վրդ. Գուշակեան

37. « « Կարնոյ (Արզրում). լիազ. Տ. Երուանդ. վրդ. Տ. Մինասեան

38. « « Վանայ. լիազ. Տ. Մեսրոպ քահ. Ճանիկեան

39. « « Լիմ և Կտուց անապատաց. Տ. Մեսրոպ քահ. Ճանիկեան

40. « « Բասենի (Հասան–Ղալա) Տ. Վահան վարդապետ

41. « « Բայազիտու. Տ. Մկրտիչ վրդ. Զըղատեան

42. « « Մշոյ. Տ. Ներսէս ծ. վրդ. Խարախանեան

43. « « Բղուոյ (Առինջ). լիազ. Տ. Մեսրոպ վրդ. Տ. Մովսիսեան

44. « « Բաղէշոյ (Բիթլիզ). Տ. Ներսէս ծ. վրդ. Խարախանեան

45. « « Դերջանի.

46. « « Բաբերդի (Բայբուրդ). Տ. Պարգև վրդ. Դանիէլեան

47. « « Երզնկայի. Տ.Երուանդ վրդ. Բերտահճեան

48. « « Զնկուշայ.

49. « « Բալուի. լիազ. Տ. Գէորգ ծ. վրդ. Ասլանեան

50. « « Զարսանջակի. լիազ. Տ. Գնել ծ. վրդ. Գալէմքեարեան

51. « « Խարբերդի. Տ. Գէորգ ծ. վրդ. Ասլանեան

52. « « Արաբկերի. լիազ. Տ. Պետրոս քահ. Գասեան

53. « « Ակնայ. Տ. Պետրոս քահ. Գասեան

54. « « Քեամաղու. լիազ. Տ. Երուանդ վրդ. Բերտահճեան

55. Առջնորդ թ. Արծնուոյ.
56. « « Կեսարիոյ. լիազ. Տ. Մեսրոպ ա. քահ. Մելեան
57. « « Տիգրանակերտի (Դիարբեքիր). լիազ. Տ. Մեսրոպ վրդ. Տէր Մովսիսեան
58. « « Բրդիսանի (Սղերդ).
59. « « Եդեսիոյ (Ուրֆա).
60. « « Բաղդատու.
61. « « Ղալաթիոյ (Էնկիւրիա). Տ. Գալուստ քահ. Տէր Գալուստեան
62. « « Զմիւռնիոյ (Իզմիր). լիազ. Տ. Յակոբ եպս. Աշոտ Փափազեան
63. « « Եգիպտոսի և Կրետէի. Տ. Մկրտիչ ծ. վ. Աղաւնունի
64. « « Պանորմայի. լիազ. Տ. Գրիգորիս վ. Պալագեան
65. « « Կուտինայի. լիազ. Տ. Կոմիտաս վ. Սողոմոնեան
66. « « Նիկոմիդիոյ (Իզմիտ) լիազ. Տ Մատթէոս. վ. Մատթէոսեան
67. « « Խուլիվանուց (Զմշկածագ). Գնել ծ. վ. Գալեամքէրեան
68. « « Պրուսայի. լիազ. Տ. Կոմիտաս վ. Սողոմոնեան
69. « « Ատրպատականի. Տ. Կարապետ ծ. վ. Տէր Մկրտչեան
70. « « Պարսկաստանի և Հնդկ. լիազ. Տ. Յովհաննէս աբքեպ. Շիրակունի

Աշխարհական Պատգամաւորք թեմից.

71. Պոգմր. թ. Կաթ. Կիլիկիոյ.
72. « « Կաթ. Աղթամարայ. պ. Յակոբ Շահպազեան
73. « « Ս. Երուսաղէմի. Ղազարոս էֆ. Պողոս-Մերկերեան

74. Պոլսոյ. թ. կ. Պոլսոյ. պ. Ստեփան Թելլիեան
75. « « Երևանայ. պ. Վասիլ Եղիազարեան
76. « « Վրաստանի. պ. Սամսոն Յարութիւնեան
77. « « Ղարաբաղի. պ. Համբարձում Առաքելեան
78. « « Շամախւոյ. պ. Ստեփան Թաղիանոսեան
89. « « Նոր Նախիջևանի և Բես. պ. Գէորգ Զուբարեան
80. « « Աստրախանի. պ. Կարապետ Ալաճալեան
81. « « Թեքիրդաղի. պ. Մկրտիչ Յ. Մէհթերեան
82. « « Ադրիանուպօլսոյ. պ. Համբարձում Մէնզիլճեան
83. « « Վառնայի. պ. Աղէքսանդր Մելիք-Ազարեան
84. « « Մոլդովալախիոյ. պ. Մինաս Զերազ
85. « « Տրապիզոնի. պ. Աւետիս Ահարոնեան
86. « « Ճանիկի. պ. Տիգրան Մարտիկեան
87. « « Շապին-Գարահիսարի. պ. Արշակ Զօպանեան
88. « « Տամզարայի և Ացպտերի.
89. « « Ամասիոյ և Մարզուանի. պ. Եփրեմ-Իբր. Իբրանոսեան
90. « « Եւդոկիոյ (Թոխատ). պ. Նազարէթ Տաղաւարեան
91. « « Սեբաստիոյ (Սվազ). պ. Նազարէթ Տաղաւարեան
92. « « Կարնոյ (Արզրում). պ. Աստուածատուր Խաչատրեան
93. « « Վանայ. պ. Պետրոս Գաբամաճեան
94. « « Լիմ և Կտուց անապատաց. պ. Պետրոս Գաբամաճեան
95. « « Բասենի (Հասան-Ղալա). պ. Մինաս Զերազ
96. « « Բայազիտու. պ. Բաղդասար Քրմօեան
97. « « Մշոյ. պ. Արշակ Զօպանեան
98. « « Քղւոյ (Առինջ). պ. Աստուածատուր Խաչատրեան

99. Պոգմր.թ. Բաղէշոյ (Բիթլիզ). պ. Խաչիկ Ալանեան
100. « « Դերջանի. պ. Մեղաւորեան
101. « « Բաբերդի (Բայբուրդ). պ. Մանուկ Սիմոնեան
102. « « Երզնկայի. պ. Յակոբ Շաւարշ
103. « « Զնկուշայ.
104. « « Բալուի. պ. Մելքոն Կիւրճեան
105. « « Զարսանջակի. պ. Համբարձում Մէնդիլեանճ
106. « « Խարբերդի. պ. Աւետիս Ահարոնեան
107. « « Արաբկերի. պ. Մարտիրոս Քէնդիկեան
108. « « Ակնայ. պ. Յակոբ Գոբեան
109. « « Քեամաղու. պ. Յակոբ Շաւարշ
110. « « Արծնուոյ.
111. « « Կեսարիոյ. պ. Կարապետ Ճամճեան
112. « « Տիգրանակերտի (Դիարբեքիր). պ. Եփրեմ-Իբր. Իբրանոսեան
113. « « Քրդիստանի (Սղերդ).
114. « « Եդեսիոյ (Ուրֆա). պ. Կարապետ Ճամճեան
115. » « Բաղդատու.
116. « « Ղալաթիոյ (Էնկիւրիա). պ. Ալիքսան Թօփալեան
117. « « Զմիւռնիոյ (Իզմիր). պ. Յովհաննէս Տէր Միրաքեան
118. « « Եգիպտոսի և Կրէտէի. պ. Մինաս Զերազ
119. « « Պանտրմայի. պ. Ներսէս Շէհպէնտէրեան
120. « « Կուտինայի. պ. Մելքոն Կիւրճեան
121. « « Նիկոմիդիոյ (Իզմիտ). պ. Յովսէփ Ամիրխանեան
122. « « Խուլիվանուց (Զմշկածագ). պ. Միհրդատ Հայկազն
123. « « Պրուսայի. պ. Սպանդար Սպանդարեան
124. « « Ատրպատականի. պ. Մարտիրոս Նազարբէկեան

125. Պատմ. թ. Պարսկաստանի և Հնդկ. Դր. Մինաս Բազիլ Ուղիղ է. Ատենադպիր Սինոդի Յ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ։

Նախորդ կաթուղիկոսների ընտրութիւնը 1843 թուին խմբագրուած կանոնների համաձայն տեղի է ունեցել բաց քուէարկութեամբ, այսինքն իւրաքանչիւր պատգամաւոր բարձրաձայն յայտարարել է իւր ընտրելիի անունը, մինչդեռ Կովկասի այժմեան Փոխարքան փոխելով այդ կարգը, յանձնարարել էր կատարել գաղտնի քուէարկութեամբ, այդ առթիւ առաջ ենք բերում Փոխարքայի պաշտօնական տարի գրութիւնն ու փոփոխուած ընտրական կանոնների յօդուածները զուգահեռաբար կանոնների նախկին խմբագրութեան հետ։

Հոկտ. 14-ին թ. 21887 թղթով Փոխարքայի պաշտօնական տարի Գենեռալ օտինֆանտերի Շատիլով գրում է Սինոդին. «Ինկատի ունենալով այն հոկտեմբերի 30 օրուայ մօտենալը, երբ նշանակուած է Ծայրագոյն Պատրիարք Կաթուղիկոսութեան աստիճանի համար թեկնածուների ընտրութիւնը, առաջարկում եմ Սինոդիդ բանալ այդ օրը ժողովը և ձեռնարկել ընտրութեան պահպանելով 1843 թուականին Անդրկովկասեան երկրի կառավարիչ Գենեռալ ադիւտանդ Նէյդգարդի սահմանած և այժմ փոփոխուած Գենեռալ ադիւտանտ Կոմս Վորոնցով Դաշկովի կողմից։ Ուղարկելով սրա հետ ի հրահանգութիւն մի օրինակ յիշեալ փոփոխուած կանոնների, աւելացնում եմ թէ Պատրիարք Կաթուղիկոսի ընտրութեան ժամանակ Բարձրագոյն պետական իշխանութեան կողմից կարգուած է իմ կողմից Երևանի Նահանգապետ Հոֆմէյստեր Բարձրագոյն Դրան Կոմս Տիղենհաուղէն։

Այս թղթի հետ ուղարկուած է հետևեալ փոփոխած յօդուածները։

Համեմատական ցուցակ կանոնների ամենայն հայոց ծայրագոյն Պատրիարք կաթուղիկոսի ընտրութեան համար։

Ա. 1843 թուին խմբագրած	Բ. Նոր խմբագրութիւնն փոփոխած Ն. Կ. Մ. Կովկասեան Փոխարքայ Գ. Ա. Կոմս Վորոնցով Դաշկովի կողմից

§ 23

Ընտրութիւնը կատարւում է ձայնատուութեան ներքոյ գրեալ կարգով

§ 25

Թեկնածուի անունը յայտարարելուց յետոյ, անձամբ ներկայ եղողներից իւրաքանչիւրը, որ ընտրելու իրաւունք ունի, յայտարարում է բարձրաձայն արժանի է համարում նա առաջարկուած անձին ծայրագոյն Պատրիարք Կաթուղիկոսի կոչման համար։ Այս արժանաւորութիւնը արտայայտւում է մի բառով «Ընտրում եմ» կամ «չեմ ընտրում»։ Ձայնատուութիւնը սկսւում է աշխարհական պատգամաւորներից կրտսերագունից և այսպէս գնում է այն կարգով, ինչպէս տուած է § 18 ում։

§ 26

Այն թեկնածուն, որին ընտրում են ձայն չի տալիս։

§ 28

Իւրաքանչիւրի ձայնը յայտարարելուց յետոյ Սինոդի պրոկուրորը նշանակում է ընտրական ցուցակում և վաւերացնում է ընտրողի խա-

§ 23

Ընտրութիւնը կատարւում է գաղտնի քուէարկութեամբ ներքոյ գրեալ կարգով

§ 25

Թեկնածուի անունը յայտարարելուց յետոյ տեղի է ունենում նրա քուէարկութիւնը գնտակներով, երբ իւրաքանչիւր ներկայ եղող և ընտրելու իրաւունք ունեցող սատանում է իր գընտակը ժողովի նախագահի ձեռքից։ Քուէարկութիւնը կատարւում է կրտսերագոյն աշխարհական պատգամաւորից և հասնում է մինչև աւագագոյնը։

§ 26

Քուէարկուող թեկնածուն քուէարկութեան չի մասնակցում

§ 27

Իւրաքանչիւր գրած գընդակի մասին Սինոդի պրոկուրորը ընտրական ցուցակում քուէարկողի ազգանուան դիմաց նշանակում է։

կական ստորագրութեամբ։ Երբ ներկայ եղող բոլոր անդամները ձայն են տալիս, այն ժամանակ ցուցակը ներկայացնում են ժողովի նախագահին, որը համրելով ձայները—առանձին ընտրողներինը, առանձին չընտրողներինը, գրում է դրանց թիւը ընտական № 2 ցուցակի համարում քուէարկուող թեկնածուի անուան հանդէպ։

Երբ բոլոր ներկայ եղողները գնում են քուէները, ապացուցակը ներկայացնում է ժողովի նախագահին, որը քուէները համարելով ընտրողներն առանձին, չընտրողներն առանձին, նրանց թիւը գրում է ընտրողական № 2 ցուցակի համապատասխան սիւնեակում քուէարկուող թեկնածուի անուան դիմաց։

Ի նկատի ունենալով ժամանակի սղութիւնը, ինչպէս ասացինք, Տաճկաստանի հայ թեմերից շատերը հնարաւորութիւն չեն ունեցել իրանց ներկայացուցիչն ուղարկել ս. Էջմիածին, այլ հեռագրով յանձնել են իրանց ձայնը այս կամ այն անձին և այդտեղից առաջ էր եկել այն հանգամանքը, որ միևնոյն անձը մի քանի թեմերից ձայն էր ստացել և ներկայանալու էր եկեղեցական-ազգային ժողովին երկու, երեք նոյն իսկ չորս ձայնով, ինչպէս այդ երևում է առաջ բերած պատգամաւորական ցուցակից։

Պատգամաւորների խորհրդակցական ժողովումներում, որոնց մասին մենք առանձին պիտի խօսենք, այս խնդիրն էլ դրուեցաւ, թէ արդեօք իւրաքանչիւր շատ ձայն ունեցող պատգամաւոր օգտուելու էր իր բոլոր ձայներից, թէ իբրև մի անձն մի քուէ տալու իրաւունք ունի և միաձայն որոշուեց այդ մասին յարմարուել Սինոդի պրոկուրօրի բացատրութեանը։ Իսկ սա վերջին օրը—նոյեմբերի 1-ին յայտնեց, որ իւրաքանչիւր անձն միայն մի ձայնի իրաւունք ունի։

Այսպէս վերացած լինելով այն բոլոր թիւրիմացութիւնները, որոնք կարող էին աղդել պաշտօնական ժողովների կանոնաւորութեան վրա, հոկտեմբերի 29-ից սկսում

են պատգամաւորների հանդիսաւոր գնացքն ու ժողովները ըստ Մինոգի կազմած ընտրութեան օրակարգի, որ առաջ ենք բերում ամբողջապէս.

ՕՐԱԿԱՐԳ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ.

Հոկտեմբ. 29-ին. Հանդիսաւոր հոգեհանգիստ.

Հոկտ. 30 1. Կարգադրիչ Յանձնաժողովը յայտնում է պատգամաւորներին, որ առաւօտեան ժ. 9-ին հաւաքուեն Վեհարան.

2. Վեհարանում պիտի լինին այդ ժամին Տ. Տեղակալը, Մինոգի բոլոր անդամները, պ. Պրոկուրորը և Ատենագրիները իւր օգնականներով.

3. Տ. Տեղակալը և հհ. ամբամբ ընդունում են պատգամաւորներին. Տ. Տեղակալը հրաւիրում է նոցա եկեղեցի՝ ներկայ լինելու ս. պատարագին և գոհացողական մաղթանքին. Կարգադրիչ Յանձնաժողովի անդամ Տ. Ղեւոնդ Եպիսկոպոս եւ Տ. Մատթէոս վարդապետ ցոյց են տալիս եկեղեցի գնալու կարգը ըստ § 12 կանոն.

4. Ս. Պատարագը մատուցանում է Տ. Տեղակալը.

5. Ս. Պատարագից յետոյ մաղթանք.

6. Տ. Տեղակալը երդմնեցնում է աշխարհական պատգամաւորներին. (Առանձին փոքր սեղան Իշման տեղի առաջ, կարմիր մահուդով ծածկած. վրան Խաչ և Աւետարան, գրիչ, թանաք. երկու հատ աթոռ).

Հոկտ. 31. 1. Առաւօտեան 9 ժամին Տ. Լուսարարապետը երրորդ է քարոզել տալիս: Այդ նշանով պատգամաւորները սկսում են ժողովուել եկեղեցի, որի դրանը նոցա ընդունում են Կարգադրիչ Յանձնաժողովի անդամներից Տ. Ղևոնդ Եպիս-

կոպոս և Տ. Մատթէոս վարդապետ, որոնք և առաջնորդում են նոցա իրենց տեղերը Տաճարում։

2. Տ. Տեղակալը երկու սարկաւագի գործակցութեամբ կարդում է հետևեալ աղօթքները։ Ա. Օրհնեալ Տեր մեր Յս. Քս., ամէն։ Հայր մեր, Բ. Սաղմոս ՁԹ. «Զգործս ձեռաց մերոց ուղիղ»..

Գ. Սբ. խաչիւս աղաչեսցուք.

Դ. Պահպանիչ։

3. Տ. Տեղակալը պաշտօնապէս բանալով ժողովը ատենաբանում է ըստ § 15 կանոն.։

4. Պ. Պօրկուրորը կարդում է Տ. Փոխարքայի առաջադրութիւնը ի 14 Հոկտեմբ. տարւոյս 21887։

5. Ատենագրիրը կարդում է Եպիսկոպոսների ընդհանուր ցուցակը։

6. Կատարւում է քուէարկութիւն չորս թեկնածուների, որից յետոյ ատենագրիրը կարդում է բացակայ պատգամաւորների գրաւոր կարծիքները։

7. Տ. Տեղակալը և Պ. Պրոկուրորը հաշուում են ձայները և ընտրուած չորս աւագ թեկնածուների անունները մուծանում են ընտրական հայերէն և ռուսերէն ցուցակների մէջ, որ ստորագրում են բոլոր ժողովականները, սկսած կրտսերագունից, և ապա Տ. Տեղակալը և Պ. Պրոկուրորը։

8. Տ. Տեղակալը փակում է նիստը և յայտնում է, որ յաջորդ օրը լինելու է ժողովի երկրորդ գումարումը։

Նոյեմբ. 1. 1. Ժողովի գումարումը տեղի է ունենում նախորդ օրուան օրինակով։

2. Ատենագրիրը կարդում է մէկ մէկ պատգամաւորների անունները, սկսած կրտսերագու-

նից, և նոցանից իւրաքանչիւրը ստանում է Տ. Տեղակալից իւր քուէն և ձգում է քուէատուփը։

3. Տեղակալը և Պ. Պրոկուրորը իւրաքանչիւր տուած քուէն նշանակում են ամէն քուէ տուող պատգամաւորի անուան դէմ № 2 ցուցակի մէջ։

4. Ամէն մի թեկնածուի քուէարկութիւնը աւարտուելուց յետոյ՝ Տ. Տեղակալը համարում է քուէները և նշանակում է ընտրողական և ոչ ընտրողական քուէների թիւը համապատասխան սիւնեակներում № 3 ցուցակի մէջ։

5. Բոլոր չորս թեկնածուների քուէարկութեան արդիւնքը № 3 ցուցակի մէջ արձանագրելուց յետոյ՝ Տ. Տեղակալը կարդում է այն ի լուր ամենեցուն և յայտարարում է, որ նոցանից քուէների մեծագոյն թիւ ստացող երկուսը համարուում են թեկնածու Կաթուղիկոսութեան ամենայն Հայոց։

6. Ընտրութեան արդիւնքը արձանագրւում է № 3 ցուցակում ըստ § 31 կանոն.։

7. Վերջին № 3 ցուցակում հայերէն և ռուսերէն օրինակները ստորագրում են բոլոր ժողովականները, սկսած կրտսերագունից, և ապա Տ. Տեղակալը և Պ. Պրոկուրորը։

8. Կազմւում է ընտրութեան մասին վերջին օրագիրը հայերէն և ռուսերէն, որ և ստորագրում են բոլոր ներկայ եղող անդամները, Պ. Պրոկուրորը և Ատենադպիրը։

Հոկտեմբերի 29-ին պատարագից յետոյ հոգեհանգիստ կատարուեց ի Տէր հանգուցեալ Մկրտիչ Ա. Կաթուղիկոսի գերեզմանի վրա, երբ տաճկահայ պատգամաւորները պսակ դրին։

Հոկտեմբերի 30-ին պատարագեց Տէր Տեղակալը։

իսկ պատարագից յետոյ նա երդուեցրեց աշխարհական բոլոր պատգամաւորներին։ Երդմնաթերթի բովանդակութիւնը հետեւեալն է «Ես, ստորև ստորագրող աշխարհական պատգամաւոր կաթուղիկոսական ընտրութեան, խոստանում և երդւում եմ Ամենակարող Աստծուն, նրա Ս. Աւետարանի առաջ այն մասին, որ ցանկանում եմ և պարտաւոր եմ Հայաստանեայց ս. եկեղեցու բարձրագոյն կառավարութեան և նրա եկեղեցականների տեսչութեան համար ամենայն Հայոց ծայրագոյն Պատրիարքի և Կաթուղիկոսի առաջիկայ ընտրութեան ժամանակ ըստ մաքուր խղճի մտաց և իմ պարտաւորութիւնների, առանց որևէ աչառութեան և անձնական ակնկալութիւնների, հեռու վանելով ինձանից թշնամութեան կիրքը և կամ բարեկամական կամ՝ ազգակցական կապը, իմ հայրենի եկեղեցու հոգևորականների միջից այնպիսի անձն, որին ես ըստ խղճի հանճարաւոր, աւելի ընդունակ և արժանաւորագոյն եմ համարում և որից սպասում եմ, որ իւր պարտաւորութիւնները կատարելիս, որ նրա վրայ դնում է այս հոգևոր վեհ աստիճանը, իրեն կներկայացնի որպէս Աստուծոյ հոգևոր պաշտօնեայ և հոգատար տնօրէն Քրիստոսի եկեղեցւոյ, և նրան հաւատացած հայրապետական իշխանութեան Քրիստոսի բանաւոր հօտի վրա։ Իսկ եթէ այլ կերպ վարուեմ, այն ժամանակ իբրև անհոգ դէպի եկեղեցու օգուտն և նրա ճշմարիտ որդոյ, որից է և իմ սեպհական օգուտը, իմ անձը ենթարկում եմ իմ եղբայրակիցների մեղադրանքներին և ապագայում Աստուծոյ և նրա ահեղ դատաստանի առաջ պատասխանատուութեան։ Անաչառ ընտրութեան համար արած իմ երդման վերջին համբուրում եմ Փրկչի Խաչն ու Բանն ամէն։

Հայրապետական ընտրութեան պէտք է մասնակցէին —
Սինոդի 8 անդամներ
Էջմիածնի միաբանութեան 7 անդամներ
Ռուսաստանի 6 թեմականներ
Տաճկաստանի 47 թեմականներ
Պարսկաստանի և Հնդկաստանի 1 առաջնորդ

Ատրպատականի 1 առաջնորդ

Ընդամէնն 70 հոգևորական պատգամաւորներ և 55 աշխարհական պատգամաւորներ, ընդամէնն 125 հոգի։

Բայց այսքանից ներկայ էին անձամբ կամ իրանց ձայները տուել էին ներկայ եղողներին ընդամէնն 44 հոգևորական 61 ձայնով և 35 աշխարհական պատգամաւորներ 46 ձայնով. ընդ. ամէնն 79 պատգամաւոր 107 ձայնով։

Չէին եկել և իրանց ձայնը չէին յանձնել ուրիշի և ոչ գրաւոր կարծիք յայտնել հետևեալ թեմերից՝

1. Ներկայացուցիչ Կաթուղիկոսի Տանն Կիլիկիոյ
2, Առաջնորդ Վառնայի
3. » Մոլդովալախիայի
4. » Տամզարայի և Աշպատերի
5. » Դերջանի
6. » Զնգուշի
7. » Արծնուոյ
8. » Եդեսիոյ (Ուրֆա)
9. » Քրդստանի (Սղերտ)
10. » Բաղդատու
11. աշխ. Պատգամաւոր թեմին Կաթուղ. Կիլիկիոյ
12. » Վառնայի Պ. Ա. Մելիք-Ազարեան
13. » Տամզարայի և Աշպատերի
14. » Բաղէշի (Բիթլիս) Պ. Խաչիկ Ասլանեան
15. » Դերջանի Պ. Մեղաւորեան
16. » Զնգուշայ
17. » Արծնուոյ
18. » Քրդստանի (Սղերդ)
և 19. » Բաղդատու։

Հոկտեմբերի 31-ին ժամը 9-ին ըստ օրակարգի բոլոր պատգամաւորները Տէր Տեղակալի առաջնորդութեամբ իջան Մայր Տաճար և նախօրօք պատրաստած տեղերը գրաւեցին ըստ աւագութեան. Մայր Տաճարում՝ պատգամաւորները նստած էին հետևեալ կերպով.



Ամենապատիւ Տ. Տեղակալ Գէորգ արքեպիսկոպոս Սուրէնեանը «Հայր մերով» բացուած յայտարարեց ժողովը և պատգամաւորների ուշադրութիւնը հրաւիրելով իրանց վեհ և պատասխանատու պարտաւորութեան վրա, խնդրեց լրջութեամբ վերաբերուել ընտրութիւններին։

Ապա Սինոդի պ. Պրոկուրորը կարդաց Կովկասի Փոխարքայի պաշտօնակատարի թուղթը ազգային ժողովի բացման մասին, իսկ Սինոդի ատենադպիրը կարդաց Էջմիածնի միաբան բոլոր արքեպիսկոպոսների և եպիսկոպոսների անուանացուցակը, որոնց միջից պիտի կազմէին քառանուն ցանկը.

Կարծումենք անհետաքրքիր չի լինիլ դնել այստեղ բոլոր բարձրաստիճան հոգևորականների անուանացուցակը և ձեռնադրութեան տարեթիւը.

---

1. Տեղակալ Կաթուղիկոսի Նախագահ
2. Հոգևորական պատգամաւոր
3. Աշխարհական
4. Եր. Նախանգ. և Պրօկ.
5. Ատենադպիրն և օգնական.

Ռուսաստանում.

1. *Մեսրոպ Արքեպիսկոպոս Սմբատեան ձեռն.* 1872 *թ.*
2. *Սուքիաս Արքեպիսկոպ. Պարզեան* » 1875
3. *Ներսէս Արքեպիս. Խուտավերտեան* » 1879
4. *Գէորգ Արքեպիս. Սուրէնեան* » 1882
5. *Գրիգոր Արքեպիս. Գառնակերտեան* » 1890
6. *Անանիա Արքեպիս. Համազասպեան* » 1894
7. *Յովհաննէս » Շիրակունի* » 1898
8. *Բարգուղիմէոս եպս. Գէորգեան* » 1901
9. *Ղևոնդ եպիս. Յովակիմեան* » 1901
10. *Յուսիկ Արքեպս. Մովսիսեան* » 1901
11. *Գարեգին » Սաթունեան* » 1901
12. *Սարգիս եպիս. Փիլոյեան* » 1901
13. *Աշոտ եպիս. Շախեան* » 1905

Տաճկաստանում

14. *Յարութիւն Արքեպիսկոպոս ձեռնադ.* 1860 *թ.*
15. *Մատթէոս » »* 1876
16. *Ստեփաննոս եպս. Սանթալճեան* » 1868
17. *Գրիգորիս արքեպ. Յովհաննիսեան* » 1872
18. *Վահրամ արքեպս. Մանկունի* » 1875
19. *Տիմոթէոս եպս. Սափրիչեան* » 1878
20. *Հմայեակ եպս. Դիմաքսեան* » 1880
21. *Ստեփաննոս արքեպ. Յովակիմեան* » 1886
22, *Մաղաքիա » Օրմանեան* » 1886
23, *Գէորգ » Երիցեան* » 1898
24. *Մաղաքիա եպս. Տէրունեան* » 1898
25, *Գաբրիէլ եպս. Ձեվահիրճեան* » 1898
26. *Յակոբ եպս. Աշոտ Փափազեան* » 1898
27. *Եղիշէ եպս. Դուրեան* » 1898
28. *Մովսէս եպս. Կէօմրիւքճեան* » 1899
30. *Յովհաննէս եպս. Արշարունի* » 1899
31. *Տրդատ եպս. Պալեան* » 1899
32. *Արիստակէս եպս. Վանքեան* » 1902

Պարսկաստանում.

33. *Սահակ Արքեպս. Այվատեան* » 1898

Ամերիկայում

34. Եղնիկ Արքեպս. Ապահունի » 1899
35. Յովսէփ Արքեպս. Սարաճեան » 1898

Եւրոպայում.

36. Գէորգ եպս. Իւթիւճեան « 1898

Այս 36 բարձրաստիճան հոգևորականներից քառասուն ցանկի մէջ մտան ձայների առաւել թիւ ստանալով։

1. Մատթէոս Արքեպիսկոպոս Իզմիրլեան 77 ձ. ընդդէմ 1-ի.

2. Եղիշէ եպս. Դուրեան 60 ձ. ընդդէմ 18-ի.

3. Մեսրոպ Արքեպս. Սմբատեան 36 ձ. ընդդէմ 33-ի.

և 4. Գրիգոր Արքեպս. Գառնակերեան 35 » 33-ի.

Ներկայ եղող հոգևորականներից Սուքիաս, Գէորգ և Յովհաննէս արքեպիսկոպոսները, հրաժարուեցան քուէարկուելուց։

Նոյեմբերի 1-ին առաւօտեան ժամը 11-ին սկսուեց երկրորդ պաշտօնական նիստը Մայր տաճարում, երբ չորս ընտրելիներից պիտի ընտրէին Հայրապետական գահի թեկնածու երկու անձն։

Քուէարկութեան դրեցին նախ Մատթէոս արքեպիսկոպոսի տուփը. Նա ստացաւ 73 սպիտակ և 4 սև քուէ։

Ապա Եղիշէ եպ. Դուրեանի՝ որն ստացաւ 55 սպիտակ. 22 սև քուէ։

Երրորդ ընտրելի Արքեպիսկոպոս Մեսրոպ Սմբատեանցի տուփից հանեցին 11 սպիտակ և 65 սև. Չորրորդ ընտրելի Գրիգոր արքեպս. Գառնակերեանի տուփից՝ 19 սպիտակ և 57 սև։

Այսպիսով բուռն ոգևորութեամբ Կաթուղիկոսական թեկնածու յայտարարուեցին Մատթէոս արքեպիսկոպոս եւ Եղիշէ եպիսկոպոս.

Ապա ընտրուեցան երեք ներկայացուցիչ ընտրութեան հետևանքը Կովկասի Փոխարքային ներկայացնելու համար։ Ընդհանուր հաւանութեամբ ընտրուեցան Գարեգին արքեպս. Ս. Յարութիւնեան և Մ. Չերազ։

Ընտրութիւնից յետոյ Ամենապատիւ Տ. Տեղակալը

հոգևորական պատգամաւորների մասնակցութեամբ կատարեց եկեղեցական, յատուկ Կաթուղիկոսական ընտրութեան համար կազմած արարողութիւնը։

Ի վերջոյ Տաճկահայ Եպիսկոսի պատգամաւոր պ. Մինաս Զերազը ի դիմաց պատգամաւորների դիմեց առ Կոմս Տիզենհաուզէն ֆրանսերէն լեզուով, յայտնելով շնորհակալութիւն Ռուսաց մարդասէր Կառավարութիւնից, որ նրա Բարձր հովանու տակ եկեղեցական ազգային ժողովը կարողացաւ ազատ, ըստ խղճի մաց կատարել Հայաստանեայց եկեղեցու պետի ընտրութիւնը և խնդրեց առ ոտս Նորին Կայսերական մեծութեան արկանել հայ ժողովրդի երախտագիտական զգացմունքը։ Ապա դառնալով առ Տ. Տեղակալ Սրբազանը, շնորհակալութիւն յայտնեց որ ամենայն անաչառութեամբ և իմաստուն ղեկավարութեամբ կարողացաւ ժողովները կառավարել և ցանկալի վախճանին հասցնել։ Շնորհակալութիւն յայտնեց նաև Սինոդի պրոկուրորին, որն իր օրէնքների բացատրութեամբ ազատեց ժողովականներին սխալանքների մէջ ընկնելուց։

Կոմս Տիզենհաուզէն ֆրանսերէն պատասխանեց պ. Զերազին իւր գոհունակութիւնն յայտնելով ժողովի անաչառ և կանոնաւոր ընթացքի մասին և իւր ուրախութիւնն, որ Հայրապետական թափուր գահը կունենայ արժանաւոր գահակալ ու խոստացաւ այս բոլորի մասին զեկուցանել Կովկասի Փոխարքայ Պայծառափայլ Կոմսին։

Բոլոր ձևականութիւնները վերջացած լինելով, երբ պէտք է Մայր Տաճարից դուրս ելնէին, թնդաց «Էջմիածնին ի Հօրէ» շարականը, որը երգելով դուրս եկան եկեղեցական և աշխարհական պատգամաւորները ժողովրդի անվերջ կէցցէների և ուրախական աղաղակների տակ։

Նոյեմբերի 4-ին Սինոդը գրում է Կովկասի Փոխարքային հետևեալ թուղթը։

Նորին Պայծառափայլութեան Կայսերական Մեծութեան Կովկասի Տ. Փոխարքային:

Էջմիածնի Սինոդը պատիւ ունի յայտնել Ձերդ Պայ-

ծառայությեան, որ համաձայն Զերդ Պայծառափայլութեան պաշտօնական գրեր Գեներալ Օտ—Ինֆանտէրի Շատիլովի անցեալ հոկտ. 14-ին № 21887 առաջադրութեան, Ամենայն Հայոց Ծայրագոյն Պատրիարք Կաթուղիկոս ընտրող պատգամաւորների ժողովը պարապմունքներն սկսեց հոկտեմբերի 30-ին, յաջորդ օրը 31-ին ընտրուեցին աւագ թեկնածուներ.

1. Մատթէոս արքեպս. Իզմիրլեան, որ ստացաւ 77 ձայն ընդհանուր 78 ներկայ եղող պատգամաւորներից, 2. Եղիշէ եպս. Դուրեան 60 ձայն. 3. Մեսրոպ Արքեպս. Ամբատեան՝ 35 ձայն և 4. Գրիգոր արքեպս. Գառնակերեան՝ 35 ձայն։ Բայց որովհետև մի քանի պատգամաւորներ ընտրուած էին մի քանի թեմերից, ուստի եթէ հաշուի առնուին և այս յաւելեալ ձայները յիշեալ պատգամաւորների, կերևայ. որ չորս աւագագոյն թեկնածուներից առաջինը ստացել է 105, երկրորդը՝ 85 ձայն, երրորդը՝ 50 ձայն, իսկ չորրորդը՝ 49 ձայն։

Ապա նոյեմբերի 1-ին կայացած նիստում ժողովը ընտրեց ամենայն Հայոց Ծայրագոյն Պատրիարք Կաթուղիկոսի աստիճանի համար Կոստանդնուպօլսի Հայ-լուսաւորչական Պատրիարք Մատթէոս Արքեպս. Իզմիրլեանին 73 ձայնով ընդդէմ 4-ի և Զմիւռնիայի առաջնորդ Եղիշէ եպս. Դուրեանին 55 ձայնով ընդդէմ 22-ի։

Ուստի Մինոգս համաձայն 1125 յօդ. XI հատ I Մ. և Ամենայն Հայոց Կաթուղիկոսի ընտրութեան համար Զերդ Պայծառափայլութեան այս 1908 թուին տուած կանոնների § 34-ի պատիւ ունի ներկայացնելու յատուկ պատգամաւորութեան ձեռքով, որ ընտրուած է համաձայն նոյն § 34 կանոնների և բաղկացած է Վրաստանի Հայ-լուսաւորչական թեմի առաջնորդ Գարեգին Արքեպս. Սաթունեանից, Վրաստանի թեմի պատգամաւոր Սամսոն Ցարութիւնեանից և Եդիպտոսի թեմի պատգամաւոր Մինաս Զերազից, ընտրական թերթը երկու օրինակ և յիշեալ թեկնածուների ընտրութեան արձանագրութիւնը ի անօրէնութիւն Զերդ Պայծառափայլութեան։

Ստորագրել է Սինոդի ամբողջ կազմը։

Նոյեմբերի 9-ին յիշեալ պատգամաւորութիւնը ներկայացել է Պայծառափայլ Կոմսին։

Այդ մասին քաղում ենք լրագրերից հետևեալը.

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ ՓՈԽԱՐՔԱՅԻ ՄՕՏ.

Կիրակի, ամսոյս 9-ին, ժամը 2-ին փոխարքայ Կոմս Վորոնցով-Դաշկով ընդունեց կաթողիկոսական ընտրողական ժողովի պատգամաւորութիւնը՝ Արքեպիսկոպոս Գարեգին Սաթունեանին, Մինաս Չերազին և Սամսոն Յարութիւնեանին։

Նախ Գարեգին արքեպիսկոպոսը դիմեց հայերէն Փոխարքային, շնորհաւորելով նրա բարի գալուստը՝ կաթողիկոսական տեղապահ Սուրէնեանի, միաբանութեան և պատգամաւորական ժողովի կողմից և ապա ներկայացրեց Սինոդի զեկուցումն և ժողովի արձանագրութիւնները Մատթէոս արքեպիսկոպոս Իզմիրլեանի և Եղիշէ եպս. Դուրեանի ընտրութեան մասին։

Ս. Յարութիւնեանը թարգմանելով ռուսերէն Գարեգին արքեպս. ասածը, աւելացրեց, որ Իզմիրլեան արքեպիսկոպոսը ազգային ժողովի կողմից ընտրուած է հոմարեա միաձայն և այժմեան հոգևորականութեան մէջ նա միակն է, որ իր առաքինութեամբ, բնական վարչական ընդունակութեամբ, անձնուիրութեամբ դէպի իր եկեղեցին և հօտը, և իր խստապահանջ օրինակատարութեամբ գրաւել է համայն հայ ազգի հաւատը և յարգանքը, ուստի պատգամաւորական ժողովը հաւատացած է, որ Կայսրը կը յարգի Հայ ազգի միահամուռ ցանկութիւնը և կը հաստատի Իզմիրլեան արքեպիսկոպոսին։

Բացի այս, ասել է պ. Յարութիւնեան, ընտրողական ազգային ժողովը յանձնարարել է պատգամաւորութեան, խնդրամատոյց լինել Չերդ Պայծառափայլութեան առաջ, որ թեկնածուների մասին հարկաւոր զեկուցումն շուտ ներկայացնուի Նորին Կայսերական Մեծութեան ի հաստատութիւն, որովհետև հայոց եկեղեցու և նրա հետ

կապուած հաստատութիւնների կեանքը իրենց բնական ընթացքի մէջ պահելու համար պահանջում են, որ օր առաջ հաստատուի նրանց պետը։

Սրանից յետոյ պ. Մ. Զերազ ֆրանսերէն լեզուով արտասանել է մի ճառ, որի մէջ յայտնել է հետևեալ մտքերը։

— Իբրև թիւրքահայ պատգամաւոր և կաթողիկոսական ընտրողական ժողովի մասնաւոր խորհրդակցութեանց առենապետ, հարկ կը զգամ շնորհակալութիւն յայտնելու ռուս կառավարութեանը, որ թոյլ տուեց մեզ ամենայն ազատութեամբ ընտրել Հայաստանեայց եկեղեցւոյ գերագոյն պետը։ Շնորհակալութիւն և Ձեզ, Պայծառափայլ Կոմս, որ Ձեր արդարասէր քաղաքականութեամբ Կովկասի ազգաբնակութեան և առանձնապէս ռուսահայերի սէրն էք զարթեցրել և յարգանքը բոլոր այն հայերի, որոնք դուրս են Ռուսաստանի սահմաններից։ Թիւրքահայ պատգամաւորները իրենց գոհունակութիւնն են յայտնում այս երկրում գտած սիրալիր ընդունելութեան համար և լիայոյս են, որ դրեթէ միաձայնութեամբ ընտրուած Իզմիրլեան Մրբազանը, որ արդէն երկու անգամ Կ. Պոլսի պատրիարք է եղած, կը հաստատուի կաթողիկոս։

Խօսակցութեան ընթացքում պ. Զերազ նորից կանգ է առել Իզմիրլեանի անձնաւորութեան վրայ և աւելացրել է, որ նա օրինապահ և պատկառելի հոգևորական է, որ նրա գործունէութիւնից գոհ կը մնայ կառավարութիւնը։

Կոմս Վ.օրոնցով–Դաշկով պատասխանել է։ «Ես շատ գոհ եմ, որ ժողովի նիստերը կատարուել են օրինական կարգապահութեամբ. ձեր ներկայացրած թեկնածուներից ես ճանաչում եմ միայն Իզմիրլեան արքեպիսկոպոսին ու պէտք է ասեմ, որ ճանաչում եմ նրան լաւ կողմից։ Ձեկուցումն նորին Կայսերական Մեծութեան ես կը ներկայացնեմ առանց յետաձգելու»։

Դրանից յետոյ տեղի է ունեցել խօսակցութիւն մի քանի մասնաւոր հարցերի մասին։

Ամբողջ ունկնդրութիւնը տևել է կէս ժամ։

Մենք վերջացրինք Ամենայն Հայոց Կաթուղիկոսի ընտրութեան ամբողջ նկարագիրն իր բոլոր մանրամասնութիւններով. սակայն ի նկատի ունենալով, որ հոգևորական և աշխարհական 78 պատգամաւորները բացի պաշտօնական ժողովներից ունեցան նաև մի շարք խորհրդակցական ժողովներ, ուստի մենք անհրաժեշտ և շատ կարևոր ենք համարում մեր նկարագիրն ամբողջացնելու համար տալ նաև այդ ժողովների նկարագիրը, կցելով նաև մեր դիտողութիւնները. Բայց այդ կանենք յաջորդ անգամ։

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆՈՐԸՆՏԻՐ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ.

Տ. Տ. Մատթէոս Ս. Աբգեպիսկ. Իզմիրլեան ծնած է 1845 փետր. 22-ին Գում Գաբու, մկրտուած Ս. Ծննդեան քառասունքին Մայր եկեղեցիին մէջ, և անուանակոչուած՝ Տեառընդառաջի առթիւ՝ Սիմէօն. աշակերտած է նախ Մայր վարժարանին մէջ մինչև 1859 և երեք տարի ևս Գում Գաբուի դուրսի ս. Պօղոսեան աշդային վարժարանը յաճախելով աւարտած է դպրոցական շրջանը։ Իր Իզմիրլեան մականունը առած է իր պապէն, դերձակ Մարտիրոս, որ Զմիւռնացի էր, իսկ հայրը դերձակ Համբարձում, բարեպաշտ արհեստաւոր մը, ինը զաւակներու տէր, որոնց եօթներորդն էր մեր Սիմէօնը։ Ուսուցիչները եղած են՝ Մկրտիչ Մեղպուրեան, Տօքթ. Ներսէս Մեղպուրեան, Զարփրատեան Միքայէլ Գէորգ պատուելին և Յարութիւն Թիւլեան։

1862-ին շրջանաւարտ ըլլալով՝ իբր մանկավարժ պաշտօն առաւ Օրթագիւղի Թարգմանչաց վարժարանին մէջ։

1864-ին Թաքթաքեան Պօղոս պատրիարքի հրամանով Օրթագիւղի ս. Աստուածածնայ եկեղեցիին մէջ տիրացու